

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՆՈՒՑՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«25» 01 2021թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունն, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտ ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Գրիգորի Կարազուլյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Հետազոտությունների հիմնարար մաթեմատիկայում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված 76,543,000 (յոթանասունվեց միլիոն հինգ հարյուր քառասուններեք հազար) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարիության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 76,543,000 (յոթանասուներեք միլիոն հինգ հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և իսխատումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա
ք. Երևան, Մ. Բաղրամյան 24

Հ/Հ 900011024115,
ՀՎՀՀ 00005673


ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտ ՊՈԱԿ
ք. Երևան, Մ.Բաղրամյան 24/5

Հ/Հ 900018005331
ՀՎՀՀ 00009056

ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

ՀՀՖՆ կենտրոնական գանձապետարան


Նախագահ՝


(ստորագրություն)

Ռադիկ Մարտիրոսյան



Տնօրեն՝


(ստորագրություն)

Գրիգորի Կարագույան



Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

(Գրիգորի Կարագույան)
(անուն ազգանուն)

Հավելված N 1
« 25 » 01 2021 թ.
N 25-1 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ



Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտի տնօրեն Գրիգորի Կարագուլյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել « 25 » 01 2021 թ.

N 25-1 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 76,543,000 (յոթանասունվեց միլիոն հինգ հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտ ՊՈԱԿ

Նախագահ՝

(ստորագրություն)
Ռադիկ Մարտիրոսյան


Տնօրեն՝

(ստորագրություն)
Գրիգորի Կարագուլյան


ԱՌԱՋԱՂԻՄՆԲ

«Հետազոտություններ հիմնարար մաթեմատիկայում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը.

Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն).

Հիմնարար հետազոտություններ մաթեմատիկական անալիզի, հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության, դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումների, մաթեմատիկական ֆիզիկայի ուղղություններով:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ).

Միջազգային բարձր նորմերին համապատասխանող հիմնարար մաթեմատիկական հետազոտություններ ծրագրում նշված ուղղություններով, ստացված գիտական արդյունքների տպագրում գրախոսվող հայրենական և արտասահմանյան ճանաչված մաթեմատիկական ամսագրերում, նրանց ներկայացումը միջազգային գիտաժողովներում:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Ուղղություն՝ Իրական և կոմպլեքս անալիզ

Թեմա 1. «Անալիտիկ և հարմոնիկ ֆունկցիաների հետազոտումը նրանց աստիճանային և Լապլասի շարքերի միջոցով: Մոտավորություններ անալիտիկ, մերոմորֆ և հարմոնիկ ֆունկցիաներով, կիրառություններ կոմպլեքս անալիզում և պոտենցիալի տեսությունում»
Նպատակները, խնդիրները, ակնկալվող արդյունքները.

- նախատեսվում է ստանալ մերոմորֆ և անալիտիկ ֆունկցիաների համար Ռ. Նևանլինայի արժեքների բաշխման տեսության նոր տարբերակներ և Վայերշտրասի տեսության տիպի արդյունքներ նաև հարմոնիկ ֆունկցիաների համար:
- նախատեսվում է հետազոտել բազմաչափ հարմոնիկ ֆունկցիաները Լապլասի շարքերով ներկայացնելու հնարավորությունը:

Թեմա 2. «Կոմպլեքս ֆունկցիաների երկրաչափական տեսություն, արժեքների բաշխում, կշռային տարածություններ»

Նպատակները, խնդիրները, ակնկալվող արդյունքները.

- նախատեսվում է շարունակել բաժնի աշխատակիցների կողմից նախկինում ներմուծված անալիտիկ ֆունկցիաների դասերի ներքին հատկությունների ուսումնասիրությունները:
*Թեմա 3. «Մինգուլյար օպերատորներ և օրթոգոնալ շարքերի զուգամիտության հարցեր»
Նպատակները, խնդիրները և ակնկալվող արդյունքները.*
- Գնդային բազիսներով օժտված տարածություններում ուսումնասիրել BO օպերատորների BMO-նորմերի գնահատականները: Ստացված գնահատականները կիրառել ֆունկցիոնալ տարածություններում բազիսների հետազոտությունների մեջ:
- Շարունակել դասական համակարգերով բազմանդամային օրթոգոնալ շարքերի ճշգրիտ Վեյլի բազմապատկիչների ուսումնասիրությունները: Ուսումնասիրել որոշ հավանականային խնդիրների հնարավոր ընդհանրացումները մուլտիպլիկատիվ համակարգերի համար:
- Դիտարկել ուղղորդված մաքսիմալ օպերատորների նորմերի գնահատականների խնդիրը ընդհանուր BO օպերատորների համար: Որոշ ընդհանուր տիրույթներով Ֆուրիեի մաքսիմալ բազմապատկիչ օպերատորների համար ստանալ L^p նորմերի ստորին լոգարիթմական գնահատականներ: Մասնավորապես՝ դիտարկել այդ խնդիրը հիպերբոլական տիրույթների համար:
- Շարունակել գրիդի ալգորիթմների զուգամիտության ուսումնասիրությունները բազմաչափ դեպքերում:

Ուղղություն՝ Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն

Թեմա 4. «Բնտեգրալային և ստոխաստիկ երկրաչափություն»

Նպատակները, խնդիրները, ակնկալվող արդյունքները.

Միստեմատիկորեն կիրառել բաժնում զարգացրած պուասոնյան պատահական հարթ ուռուցիկ պատուհանների եղանակը *ստոխաստիկ երկրաչափության* խնդիրներում: Մշակել կոմբինատոր ալգորիթմների կիրառումը:

Նախատեսվում է տարածել արդյունքները եռաչափ պուասոնյան ուռուցիկ պատուհանների վրա:

Ուսումնասիրություններ հիպերհարթությունների չափերի եւ մետրիկների փոխադարձ կապերի միջեւ զույգչափանի եվկլիդյան տարածություններում: Մասնավորապես նախկինում ստացված Հիլբերտի 4-րդ խնդրի լուծումը տարածել բազմաչափ տարածությունների դեպքերում:

Գիրսյան պատահական դաշտերի (դասական և քվանտային համակարգեր) ասիմպտոտիկ հատկությունների հետազոտում:

Հետազոտել պիտակավորված կետային պրոցեսներից առաջացած խճանկարների հատկությունները: Ակնկալվում են այդպիսի խճանկարների կառուցման ալգորիթմների կիրառությունները մաթեմատիկական ֆիզիկայից եկող խնդիրներում:

Պատահական խճանկարների էքստրեմալ հատկությունների կիրառումը մաթեմատիկական ֆիզիկայի խնդիրներում:

Ուղղություն՝ Դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումներ

Թեմա 5. «Մասնակի ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումներ, Բնտեգրալ հավասարումներ և ֆունկցիոնալ անալիզ».

Նպատակները, խնդիրները և ակնկալվող արդյունքները.

- Շարունակվելու են ազատ եզրերով խոչընդոտի տիպի խնդիրներին համապատասխանող դիսկրետ խնդիրների ուսումնասիրությունը, ինչը կարևոր է լուծման գոյության, միակության, և այլ հարցերի համար: Առանձնահատուկ կարևորվում է խնդիրների մոտավոր լուծումները գտնելու հարցերը, քանի որ նախկինում այս տիրույթը բավարար ուշադրության չի արժանացել համապատասխան գրականությունում:
- Ուսումնասիրման համար հետաքրքիր տիրույթ է նաև կոտորակային ածանցյալներով գրված խնդիրները: Դրանք կուսումնասիրվեն թե տեսական տեսանկյունից՝ գոյության և միակության հարցեր, թե թվային անալիզի լուծումների կառուցման տեսանկյունից:

Թեմա 6. «Արագ եռանկյունաչափական մոտարկում»

Նպատակները, խնդիրները և ակնկալվող արդյունքները.

- Ուսումնասիրել Ֆուրիեի անընդհատ և դիսկրետ գործակիցներով մոտարկումների և ինտերպոլիացիաների զուգամիտության արագացման հարցերը: Դիտարկել քվադր-պարբերական մոտեցումների կիրառման հնարավորությունները: Նմանատիպ խնդիրներ կուսումնասիրվեն նաև ձևափոխված եռանկյունաչափական համակարգով իրականացվող մոտարկումների և ինտերպոլիացիաների համար, որոնց հատկությունները նման են դասական եռանկյունաչափական համակարգով իրականացվող վերլուծություններին: Համապատասխան ալգորիթմները կիրականացվեն Wolfram Mathematica ծրագրով և կուսումնասիրվեն թվային անալիզի տեսանկյունից (կայունություն, բարդություն և այլն):
- Կուսումնասիրվի մեքենայական ուսուցման և խորը ուսուցման մեթոդների կիրառելիությունը բազմաչափ ժամանակային շարքերի կանխատեսման խնդիրների համար: Կարևոր խնդիր է յուրահատուկ կետերի և պրոցեսների բացահայտումը, որն ունի լուրջ կիրառություններ ենթակառուցվածքների և նրանց վրա աշխատող ծրագրերի կառավարման, արտակարգ իրավիճակների կանխատեսման և կանխարգելման, ինչպես նաև պատճառների ուսումնասիրման համար:


Ուղղություն՝ Մաթեմատիկական ֆիզիկա

Թեմա 7. «Բնտեգրալ և ինտեգրալ-դիֆերենցիալ հավասարումներ մաթեմատիկական ֆիզիկայում և պատահական պրոցեսներում»

- Զարգացնել կորիզի միջինացման և երկկողմ շարունակության մեթոդները փաթեթի տիպի ինտեգրալ հավասարումների համակարգերի համար: Կիրառել շարժվող միջավայրում ճառագայթման տեղափոխման խնդիրների և գազերի կինետիկ տեսության որոշ խնդիրների նկատմամբ:

- Զարգացնել կիսաշրջված ֆակտորիզացիայի մեթոդը նորմավորված օղակներում:
- Մշակել և հետազոտել համաճարակների աշխարհագրական տարածման նոր մաթեմատիկական մոդելներ, որոնք բերվում են ոչ գծային ինտեգրալ հավասարումների համակարգի:
- Զարգացնել p-ադիկ լարերի տեսության մեջ ծագող որոշ ոչ գծային ինտեգրալ հավասարումների համակարգերի տեսությունը:
- Հետազոտել օկտանտում և որոշ այլ անվերջ տիրույթներում փաթեթի համասեռ և անհամասեռ կոնսերվատիվ հավասարումների լուծման գոյության ու միակության հարցերը:
- Ստանալ ասիմպտոտիկ և օսցիլիացիոն նոր թեորեմներ գծային դիֆերենցիալ հավասարումների համար:
- Ստանալ ազդանշանների մշակման բնագավառում Բայյան-Լոուի տիպի նոր թեորեմ:


Կազմակերպության
տնօրեն (ռեկտոր)



(Գրիգորի Կարագույան)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար






(Գրիգորի Կարագույան)
(անուն ազգանուն)

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *
«Հետազոտություններ հիմնարար մաթեմատիկայում» ծրագրի
(ծրագրի անվանումը)


Իրականացվելիք միջոցառման						
h/h	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները (այդ թվում՝ Հավելված N 2-ի 5-րդ կետում նշված ակնկալվող արդյունքները)	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Հիմնարար մաթեմատիկական հետազոտություններ	Մաթեմատիկական հետազոտություններ ծրագրում նշված ուղղություններով	Գրականության ուսումնասիրություն, Մաթեմատիկական աշխատանքների կատարում, Աշխատանքների ձևավորում և ձևակերպում, Տեղական և միջազգային գիտաժողովներում արդյունքների ներկայացում, Սեմինարների կազմակերպում, Համապատասխան մաթեմատիկական ալգորիթմների թվային փորձարկումներ, Ծրագրային փաթեթներ կազմում, Գիտական հոդվածների տպագրում	Միջազգային ետրմերին համապատասխանող նոր գիտական արդյունքների ստացում, Գիտաժողովներում արդյունքների ներկայացում	I-IV եռամսյակ	76,543,000
Ընդամենը						76,543,000

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝



(ստորագրություն)

(Գրիգորի Կարազույան)
(անուն և գզանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

(Գրիգորի Կարազույան)
(անուն և գզանուն)



* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով

ՆԱԽԱՀԱՇԻՎ
 «Հետազոտություններ հիմնարար մաթեմատիկայում» ծրագրի
 (ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	70643,0	14128,6	17660,8	17660,7	21192,9
2	տնտեսական և այլ ծախսեր*	5900,0	1180,0	1475,0	1475,0	1770,0
ԸՆԴԱՄԵՆԸ		76543,0	15308,6	19135,8	19135,7	22962,9

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝

[Ստորագրություն]
 (ստորագրություն)

(Գրիգորի Կարապույան)
 (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

[Ստորագրություն]
 (ստորագրություն)

(Գոհար Հովհաննիսյան)
 (անուն ազգանուն)



* Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման անվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ անվազն 5%-ը

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ՝

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	4208,9
	էլեկտրաէներգիայի ծառայություն	1780,0
	ջրաղի ծառայություն	1456,1
	ջրամատակարարման ծառայություն	120,0
	կապի ծառայություն	785,6
	աղբահանություն և դեռատիզացիա	67,2
2	Գույք	
3	Սարքեր և սարքավորումներ	
4	Նյութեր	390,0
5	Գործուղումներ	50,0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	
7	Արշավախմբեր	
8	Հրատարակման ծախսեր	
9	Այլ ծախսեր	1251,1
Ընդամենը		5900,0

Կազմակերպության տնօրեն՝

[Handwritten Signature]
 (ստորագրություն)

(Գրիգորի Կարազույան)
 (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

[Handwritten Signature]
 (ստորագրություն)

(Գոհար Հովհաննիսյան)
 (անուն ազգանուն)




* Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Հետազոտություններ հիմնարար մաթեմատիկայում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Ամսական աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1	Կարագուլյան Գրիգորի Արտաշեսի	տնօրեն	Ֆ.մ.գ.դ.	230,000.00 դր.
2	Առաքելյան Նորայր Հունանի	տնօրենի խորհրդական	ակադեմ.	300,000.00 դր.
3	Վաղարշակյան Արմեն Աշոտի	գիտական քարտուղար	Ֆ.մ.գ.թ.	170,000.00 դր.
4	Հովհաննիսյան Գոհար Ռաֆիկի	գլխավոր հաշվապահ		170,000.00 դր.
5	Առաքելյան Նորայր Հունանի	բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող	ակադ.	98,000.00 դր.
6	Բարսեղյան Գրիգոր Արտաշեսի	առաջ. գիտաշխատող	Ֆ.մ.գ.դ.	145,000.00 դր.
7	Պետրոսյան Ալբերտ Իսրայելի	առաջ. գիտաշխատող	Ֆ.մ.գ.դ.	45,000.00 դր.
8	Կարապետյան Արման Հովհաննեսի	ավագ գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ.	125,000.00 դր.
9	Ալեքսանյան Սարգիս Հակոբի	գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ.	47,000.00 դր.
10	Ստեփանյան Շողակաթ Արայիկի	կրտսեր գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ.	94,000.00 դր.
11	Մկրտչյան Ալեքսանդր Զանիբեկի	գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ.	100,000.00 դր.
12	Հակոբյան Հակոբ Ավագի	բաժնի վարիչի պաշտոնակատար, առաջ. գիտաշխատող	Ֆ.մ.գ.դ.	165,000.00 դր.
13	Սահակյան Արթուր Արտուշի	գլխավոր գիտաշխատող	թղթ. անդ.	45,000.00 դր.
14	Կարագուլյան Գրիգորի Արտաշեսի	գլխավոր գիտաշխատող	Ֆ.մ.գ.դ.	
15	Գոգյան Սմբատ Լյովայի	ավագ գիտաշխատող	Ֆ.մ.գ.դ.	125,000.00 դր.
16		գիտաշխատող		100,000.00 դր.
17	Խաչատրյան Լինդա Ալբերտի	գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ.	100,000.00 դր.
18	Վաղարշակյան Արմեն Աշոտի	ավագ գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ.	
19		կրտսեր գիտաշխ.		94,000.00 դր.
20	Համբարձումյան Ռուբեն Վիկտորի	բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխ	ակադ.	165,000.00 դր.
21	Նահապետյան Բորիս Սերգեյի	առաջ. գիտաշխատող	թղթ. անդ.	145,000.00 դր.
22	Պողոսյան Սուրեն Կապուշի	առաջ. գիտաշխատող.	Ֆ.մ.գ.դ.	145,000.00 դր.
23	Արամյան Ռաֆիկ Հրաչիկի	առաջ. գիտաշխատող	Ֆ.մ.գ.դ.	45,000.00 դր.
24	Սուքիասյան Հայկ Ստեփանի	ավագ գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ., տեխ.գ.դ.	125,000.00 դր.
25		ավագ գիտաշխատող		125,000.00 դր.
26	Պողոսյան Առնակ Վալերիի	բաժնի վարիչի պաշտոնակատար, ավագ . գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ.	160,000.00 դր.
27	Ներսեսյան Անրի Բարսեղի	գլխավոր գիտաշխատող	ակադ.	150,000.00 դր.
28	Ղազարյան Հայկ Գեղամի	առաջ. գիտաշխատող	Ֆ.մ.գ.դ.	45,000.00 դր.
29	Քամալյան Արմեն Հրաչիկի	ավագ գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ.	125,000.00 դր.
30	Բարխուդարյան Ռաֆայել Հրայրի	ավագ գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ.	47,000.00 դր.
31		կրտսեր գիտաշխատող		94,000.00 դր.
32	Առաքելյան Ավետիք Գենիյայի	գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ.	100,000.00 դր.
33	Պողոսյան Լուսինե Դավթի	գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ.	100,000.00 դր.
34	Փահլևանյան Ավետիք Արայի	կրտսեր գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ.	94,000.00 դր.
35		կրտսեր գիտաշխատող		94,000.00 դր.


36	Ենգիբարյան Նորայր Բագրատի	բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող	Ֆ.մ.գ.դ.	165,000.00 դր.
37	Արաբաջյան Լևոն Գուրգենի	առաջ. գիտաշխատող	Ֆ.մ.գ.դ.	45,000.00 դր.
38	Խաչատրյան Աղավարդ Խաչատուրի	առաջ. գիտաշխատող	Ֆ.մ.գ.դ.	45,000.00 դր.
39	Խաչատրյան Խաչատուր Աղավարդի	առաջ. գիտաշխատող	Ֆ.մ.գ.դ.	45,000.00 դր.
40	Գրիգորյան Գևորգ Ավագի	ավագ գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ.	125,000.00 դր.
41	Ավանեսյան Գագիկ Տաճատի	գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ.	100,000.00 դր.
42	Բարսեղյան Անի Գառնիկի	գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ.	47,000.00 դր.
43	Խուրշուդյան Անահիտ Լևոնի	գործավար		100,000.00 դր.
44	Միրզոյան Լիլիա Ռոմանի	կադրերի մասնագետ		94,000.00 դր.
45		գնումների համակարգող		54,000.00 դր.
46	Հովհաննիսյան Հռիփսիկ Արմենակի	հաշվապահ-գանձապահ		105,000.00 դր.
47	Թադևոսյան Ռոբերտ Նորայրի	համակարգչային ադմին.		45,000.00 դր.
48	Ավանեսովա Լյուդմիլա Գեորգիի	գրադարանի վարիչ		90,000.00 դր.
49	Բեկչյան Կարինե Մաթևոսի	տնտեսվար		90,000.00 դր.
50	Հովհաննիսյան Սեդրակ Վոլոդյայի	տեխնիկ		90,000.00 դր.
51	Հարությունյան Մերի Ազատի	հավաքարար		94,000.00 դր.
52	Սարգսյան Կարինե Սարտիրոսի	հավաքարար		94,000.00 դր.
53	Մկրտչյան Արծրուն Եղիշի	պահակ		95,000.00 դր.
54	Օհանյան Հովհաննես Նիկոլայի	պահակ		95,000.00 դր.
55	Օհանյան Արմեն Հրանտի	պահակ		95,000.00 դր.
56	Մնացականյան Հովիկ Սանդրոյի	պահակ		95,000.00 դր.
Ընդամենը				5,720,000.00 դր.

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)


(ստորագրություն)

(Գրիգորի Կարագոլյան)
(անուն ազգանուն)

Կազմակերպության անձնակազմի կառավարման բաժնի պետ


(ստորագրություն)

(Լիլիա Միրզոյան)
(անուն ազգանուն)

